ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«Սթոուն Լենդ» ՍՊԸ ընկերությունը Ֆանտան-Ջրաբերի պեռլիտի հանքավայրի 2-րդ տեղամասի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 16.08.2017թ.-ի ՆՇԱԹ-29/587 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ արտադրական հրապարակի տարածքում,
4. հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական զննման եղանակով:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Ֆանտան-Ջրաբերի պեռլիտի հանքավայրի 2-րդ տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊԸ
տնօրեն՝ Ս. ՍԱՖԱՐՅԱՆ

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկում-ների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականությունը | Միջինացված արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ | Բացահանք | Անօրգանական փոշի ($SiO_2$ 20-70% ) | Նմուշարկում, ավտոմատ չափում | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.071մգ/մ$^{3}$/1/ |
| | Լցակույտի տարածք | | | | |
| Մակերևութային ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Հողային ծածկույթ | Արտադրական հրապարակի տարածք | Նավթա-մթերքներ | Դիտարկում, նմուշարկում | 2025 թվականի ընթացքում մեկ անգամ | Նավթամթերք-ների արտահոսքի հետքեր չի դիտարկվել |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Հանքավայրի տարածք | ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ | Դիտարկում դաշտային պայմաններում | 2025 թվականի ընթացքում մեկ անգամ | ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված, էնդեմիկ տեսակներ չեն դիտարկվել |

[1] Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մինչև տասը հազար բնակչության դեպքում փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| | |
|---|---|
| Աղմուկ և թրթռում | Նախատեսված չէ |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ |
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց-վածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան |
| Լեռնատրանսպոր-տային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում |


Հող.նմ - 1
Մթն. օդ - 1
Մթն. օդ - 2
Մթն. օդ - 1 - օդի նմուշարկում բացահանքի սահմաններում
Մթն. օդ - 2 - օդի նմուշարկում լցակույտի տարածքում
Հող. նմ - 1 - հողային ծածկույթի նմուշարկում արտադրական հրապարակի տարածքում
Կենսաբազմազանության դիտարկման տարածք

Նկար 1.